ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա.Ա. ԲՈՋՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
«Գարեգին Ա» Աստվածաբանական կենտրոնի տնօրեն

«ԳԱՐԵԳԻՆ Ա» ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԵՒ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

(մտորումներ Վեհափառ Հայրապետի գահակալման տասնամյակի առիթով)

Ամենայն Հայոց կաթողիկոսարանը իր գոյության 1700-ամյա շրջանում, բացի իր հոգեւոր առաքելությունից, մինչեւ Ի դարը իրականացրել է նաեւ ուսումնական-կավարժական եւ գիտական լայնածավալ գործունեություն: Մայր Աթոռի գիտական առաքելության ամենավառ վկայությունը Ի դարում Վաղարշապատի հայագիտական դպրոցի հրատարակած բազմահատոր աշխատություններն են եւ իհարկե «Արարատ» ամսագիրը, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը եւ ուրույն տեղ են ապահովել հայ պատմաբանասիրական հետազոտությունների անդաստանում: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս առաքելությունը մեծ ջանքերի գնով վերակենդանացրեցին Վազգեն Ա եւ Գարեգին Ա երջանկահիշատակ Կաթողիկոսները:

Հետեւելով իր նախորդների նախանձախնդիր գործունեությանը՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը իր գահակալության առաջին տարում իսկ ձեռնամուխ եղավ Հայաստանում եւ Մայր Աթոռում հայագիտական հետազոտությունների հովանավորությանն ու գիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման գործին: Այդ քայլով նա առաջին հերթին նպատակ դրեց տպագրության միջոցով խրախուսել հասարակագիտության բնագավառում արժեքներ ստեղծած գիտնականներին եւ փորձեց նրանց ներգրավել Ս. Էջմիածնի գիտակրթական ծրագրերի մեջ: Մեծ ուժեր ներդնելով Մայր Աթոռում կրթական գործը բարձր մակարդակի վրա դնելու աշխատանքներին, որի ընթացքում դասախոսական համապատասխան կադրերով համալրվեցին Ս. Էջմիածնի Գեւորգյան ճեմարանը, Սեւանի Վազգենյան եւ Գյումրիի հոգեւոր-կրթական հաստատությունները, միեւնույն ժամանակ ստեղծվեց քահանայից լսարանը: Հիշյալ հաստատությունները պիտի խթանեին Մայր Աթոռում գիտակրթական գործը, նոր լիցք հաղորդեին հոգեւորականության պատրաստման բարդ ու պատասխանատու աշխատանքին: Այսօրվա հրամայականնե-

րի թվում Եկեղեցու կողմից կարեւոր տեղ հատկացվեց պատանի եւ երիտասարդ սերնդի հոգեւոր դաստիարակությանը, որն իր նպատը պիտի բերեր ուսումնական գործի խթանմանը Հանրապետության հանրակրթական դպրոցներում եւ բուհերում: Վեհափառ Հայրապետի գահակալության հինգ տարիների ընթացքում ավելի ակտիվ սկսեց գործել նաեւ Օշականի դպրանոցը, ուր կազմակերպվեցին զանազան գիտաժողովներ՝ նվիրված հայագիտության եւ մեր մշակույթի զանազան խնդիրներին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նաեւ խթանեց հայագիտական գիտաժողովների կազմակերպումը՝ համագործակցելով ՀՀ ԳԱԱ հասարակական ինստիտուտների գիտաշխատողների եւ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Առանց Ս. Էջմիածնի ներդրումի անհնար է պատկերացնել քրիստոնեության 1700-ամյակին նվիրված գիտաժողովները Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս (Հռոմ, Ս.Պետերբուրգ, Միչիգան, Օշական, Երեւան), ինչպես նաեւ հայագիտության հարցերին նվիրված միջազգային առաջին համաժողովը: Բազմաթիվ նոր հրատարակություններ սկսեց իրականացնել Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնը: Մեր Եկեղեցու նախաձեռնած նման հաստատությունների թվում կարեւոր ձեռքբերումներ ունի Նյու Յորքի «Գրիգոր Զոհրապ» կենտրոնը: Համապատասխան արդյունք է սպասվում նաեւ Նյու Յորքում վերջերս բացված «Գարեգին Ա» կենտրոնից:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա» աստվածաբանական-հայագիտական կենտրոնը պաշտոնապես հիմնվեց 2000 թ. հունիսի 26-ին: Այս ծրագրի հիմնական բաղկացուցիչն էր դեռեւս Վազգեն Ա Հայրապետի գահակալության շրջանից Մայր Աթոռում հավաքված գրադարանը, որը եզակի էր Հայաստանում իր աստվածաբանական եւ եկեղեցագիտական գրականությամբ: Սկսեցին այստեղ հավաքվել նաեւ Գարեգին Առաջինիի, Հակոբ Անասյանի եւ Պողոս Խաչատրյանի անձնական գրադարանները: Գարեգին Բ Վեհափառը պարբերաբար սկսեց հարստացնել ֆոնդը իրեն նվիրված գրքերով:

Գարեգին Բ Վեհափառը, հիմնադրելով այս կենտրոնը, իր առջեւ նպատակ էր դրել Էջմիածնում ստեղծել հայագիտական-աստվածաբանական հետազոտություններով զբաղվող գիտական կենտրոն, որը կնպաստեր Հայաստանում դեռեւս նոր ձեւավորվող որոշ գիտաճյուղերի (աստվածաբանություն, եկեղեցագիտություն, վավերագիտություն եւ կանոնագիտություն) զարգացմանը: Վեհափառ Հայրապետի նպատակներից էր նաեւ Եկեղեցու հովանու ներքո զարկ տալ աստվածաբանական, միջնադարագիտական, կանոնագիտական եւ հայագիտական կրթությանը Մայր Աթոռում, դրանով իսկ նպաստել վերեւում թվարկված ուսումնական հաստատություններում կրթություն ստացած երիտասարդների առաջընթացը եկեղեցագիտության տարբեր բնագավառների եւ հասարակական գիտությունների ասպարեզում: Ծրագրի բաղկացուցիչ մասերից մեկն էլ այն էր, որ արտասահման կրթության մեկնող հոգեւորականները, որոնց թիվն արդեն հասնում է շուրջ երեք տասնյակի, ավելի մոտից ծանոթանային համաշխարհային հասարակագիտության եւ եկեղեցագիտության նվաճումներին, շփվեին Հայոց Եկեղեցու առջեւ կանգնած հիմնա-

հարցերի ու դրանց շուրջ գրված գրականության հետ: Այս կապերը եւս նպաստեցին Գարեգին Առաջինի անունը կրող գրադարանի հարստացմանը:

Հայտնի է, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր գիտական ներուժով Ի դարի սկզբին առաջնակարգ տեղ է զբաղեցրել հայագիտության խնդիրների լուծման ասպարեզում: Դրան նպաստում էին հարյուրամյակների ընթացքում Մայր Աթոռում հավաքված տպագիր եւ ձեռագիր գրքերի եզակի հավաքածուները: Գիտական այդ հսկայածավալ ներուժը Հայաստանի խորհրդայնացման տարիներին ազգայնացվել էր: Խորհրդային պետությունը, Եկեղեցուն զրկելով հոգեւոր-կրթական իր հաստատություններից, պետականացրել էր հարյուրամյակների ընթացքում Էջմիածնում կուտակված հոգեւոր-մշակութային արժեքները: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին Մայր Աթոռում ձեռնարկված գիտակրթական բոլոր նախաձեռնությունների պսակն հանդիսացող եւ հայ մեծահարուստների դրամագլխով կառուցված Ասպղաղիտարանը (Ա. Մանթաշեւ) ու Մատենադարանի նորակառույց շենքը հարկադրական պարապուրդի էին մատնվել: Խորհրդային պետությունը ազգայնացված եկեղեցական արժեքների հիմքի վրա Երեւանում ստեղծել էր Պատմության թանգարանը, իր ձեռքն անցած ձեռագրերի ու գրականության հիմքի վրա հիմնադրել էր Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանը, իսկ գրականության մյուս մասով էլ համալրել էր Մյասնիկյանի անվան պետական գրադարանը, Երեւանի պետական համալսարանի եւ Գիտությունների ակադեմիայի գրադարանները: Այնուամենայնիվ, այդ հաստատությունները իրենց առջեւ երբեք չդրեցին եւ չէին կարող դնել հոգեւոր եւ եկեղեցագիտական խնդիրների հետազոտությունը եւ հրապարակվող գրականության հավաքումը: Անցած 80 տարիների ընթացքում կրթությունն ու գիտությունն ամբողջովին առանձնացվել էին Հայ Առաքելական Եկեղեցուց, թեպետ Գեւորգյան ճեմարանի նախկին շրջանավարտները գործուն մասնակցություն էին ունեցել Պետական համալսարանի եւ Գիտությունների ակադեմիայի կայացման աշխատանքներում: Նրանց ավանդը հատկապես մեծ է եղել խորհրդային տարիներին Հայաստանում գիտական օջախներ կազմակերպելու գործում: Ցավոք, առժամանակ, խորհրդային պետական մեխանիզմի ճնշումներով, զրոյական մակարդակի իջեցվեց գիտակրթական գործը Ս. Էջմիածնում: Էջմիածնի հայագիտական դպրոցը, որը նախանձախնդրություն էր հանդես բերել Հայաստանում ատվածաբանության, եկեղեցագիտության, բյուզանդագիտության, ասորագիտության, ձեռագրագիտության, բնագրագիտության, շարականագիտության, էպոսագիտության եւ լայն իմաստով հայկական պատմաբանասիրության զարգացման գործում, զրկվել էր գիտության մեջ իր ծանրակշիռ խոսքն ասելու հնարավորությունից:

Խորհրդային տարիներին Եկեղեցին ամբողջովին զրկվել էր գիտահետազոտական համալիրներ ունենալու հնարավորությունից, այդ է պատճառը, որ չունենալով սեփական կենտրոններ՝ Ի դարի Հայոց Վեհափառները ամեն կերպ աշխատեցին օժանդակություն հանդես բերել Հայաստանի Հանրապետությունում գիտակրթական գործի զարգացմանը: Վազգեն Ա Վեհափառի կողմից ԳԱԱ-ին նվիրվեց

տպարան, բազմաթիվ արժեքավոր գրքեր եւ ձեռագրեր հանձնվեցին ի պահպանություն Մատենադարանին եւ գիտական մյուս կենտրոններին: ԳԱԱ եւ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատողների ներգրավումով իրականացվեցին Եկեղեցուն մտահոգող մի շարք գիտահետազոտական ծրագրեր (Կանոնագրքի եւ Աստվածաշնչի գիտական բնագրերի հրատարակություն եւն.): Այնուամենայնիվ, ի հակադրություն բոլոր այս զարգացումների, Ի դարի 40-ական թթ. Գեւորգ Զ Կաթողիկոսի կողմից Մայր Աթոռի վերանորոգման ժամանակներից, երբ, չնայած բոլոր խոչընդոտներին, կրկին սկսեց բարձրանալ Եկեղեցու հեղինակությունը, Մայր Հայրենիքում վերաբացվեց Գեւորգյան ճեմարանը: Այս գործընթացի շարունակման մեջ հսկայական դեր կատարեց Վազգեն Ա Վեհափառը, որը մի շարք գործուն քայլերով վերականգնեց Գեւորգյան ճեմարանի հեղինակությունը՝ միաժամանակ օգտակար լինելով Հայաստանում ստեղծված քաղաքացիական նոր գիտական հիմնարկների եւ մշակութային օջախների կայացմանը: Նա վերականգնեց նաեւ Գեւորգյան ճեմարանի ուսումնակրթական գրադարանը եւ ի սպաս դրեց հոգեւորականության նոր սերնդի պատրաստման գործին: Այդ շրջանի կարեւորագույն ձեռնարկներ դարձան Աստվածաշնչի բնագրի նոր աշխարհաբար թարգմանությունը եւ Մայր Աթոռի շուրջ համախմբված գիտնականների (Հ.Անասյան, Ս.Քոլանջյան, Պ.Հակոբյան եւ ուրիշներ) հայագիտական հրապարակումները Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածնում»: Վազգեն Ա Վեհափառը Ալեք Մանուկյանի հովանավորությամբ կարեւոր քայլեր կատարեց Էջմիածնի թանգարանային համալիրի վերականգնման գործում, եւ 1982 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվեց Ալեք Մանուկյան թանգարանը՝ շարունակելով այդ գործում երանաշնորհ Գեւորգ Դ- եւ նրան հաջորդած կաթողիկոսների ավանդները: Վազգեն Առաջինի գահակալման տարիներին Մայր Աթոռում հավաքվեցին նաեւ բավարար թվով ձեռագրեր, որոնց հիմքի վրա ստեղծվեց Մայր Աթոռի նոր Մատենադարանը:

Էջմիածնում Ի դարի ընթացքում, հատկապես Վազգեն Ա եւ Գարեգին Ա Կաթողիկոսների գահակալության տարիներին հավաքվել էր բավական թվով գրականություն, որը մատչելի էր միայն Եկեղեցու սահմանափակ թվով սպասավորների եւ լիարժեքորեն չէր ծառայում իր նպատակին:

Գարեգին Առաջինը ճեմարանական կրթությունը բավարար մակարդակի վրա դնելու իր ջանքերին զուգահեռ քայլեր ձեռնարկեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հայագիտական-աստվածաբանական կենտրոն ստեղծելու առաքելության մեջ: Հայաստանի անկախացման առաջին տարիներին գիտական մի կենտրոն ստեղծելու նպատակով Օշականում 1998 թ. բացվեց Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը, որը Արագածոտնի թեմի հովանու ներքո իրականացնելու էր գիտական աշխատանքներ, կազմակերպելու էր գիտաժողովներ ու ցուցահանդեսներ[36]:

Գիտակրթական գործն ավելի կայուն հիմքերի վրա դնելու համար Մայր Աթոռի Ալեք Մանուկյան թանգարանում տեղ հատկացվեց «Գարեգին Ա» հայագիտական-

36 Տե՛ս «Էջմիածին», 1998, ժ-ԺԱ, էջ147-149:

աստվածաբանական կենտրոնի եւ գիտական գրադարանի ստեղծման համար: Ի լրումն այս նախաձեռնության, ինչպես ասվեց, 2000 թ. հունիսին Գարեգին Երկրորդը Վազգեն Առաջինի հիմնադրած եւ Գարեգին Ա-ի կողմից հարստացված գրադարանին տեղ հատկացրեց Ալեք Մանուկյան թանգարան-գանձատան շենքի աջ թեւի առաջին եւ երկրորդ հարկերում: Առանձնացվեց գրադարանային գործին տեղյակ մասնագետների մի խումբ, որը ձեռնամուխ եղավ գրադարանի դասակարգման եւ քարտագրման աշխատանքներին: Միաժամանակ ծրագրեր մշակվեցին նորաբաց կենտրոնի նոր շենք կառուցելու գործում, ուր կհավաքվեն ապագայում «Գարեգին Ա» կենտրոնի գրքերը, Մայր Աթոռի ձեռագրատունը եւ արխիվը: Ծրագրվեց այդ հիմքի վրա ստեղծել գիտահետազոտական կենտրոն՝ համապատասխան աշխատասենյակներով, լաբորատորիաներով եւ ընթերցասրահներով, որոնք ապահովված կլինեն ժամանակակից տեխնիկայով: Համալրման աշխատանքներին զուգահեռ գրադարանի աշխատակազմը սկսեց սպասարկել Մայր Աթոռի հոգեւորականներին եւ ճեմարանի ուսանողներին ու շրջանավարտներին: Գրադարանի ֆոնդ սկսեցին մուծվել Վեհափառի անունով աշխարհի բոլոր ծայրերից ստացված գրքերը: Միեւնույն ժամանակ Գարեգին Բ Վեհափառը Մայր Աթոռի սուղ միջոցներից հատկացումներ սկսեց կատարել Երեւանի գրախանութներից գրքեր գնելու համար:

2000 թ. շուրջ 20 000 գիրք ունեցող «Գարեգին Ա» կենտրոնի գրադարանը այսօր իր ֆոնդերում հաշվում է շուրջ 40 000 միավոր գրականություն: Կենտրոնն ունի շուրջ 200 կտոր հնատիպ գրականություն: Վերջին տարիների ընթացքում կենտրոնը տարեկան համալրվել է շուրջ 3 - 4 000 միավոր գնված գրականությամբ: Եթե այս միտումը շարունակվի եւ զարգանա, ապա մեկ տասնամյակ հետո այն կարող է լինել Հայաստանի լավագույն միջնադարագիտական եւ եկեղեցագիտական գրադարաններից մեկը:

Կենտրոնն ունի աշխատանքի երկու ուղղություն.

ա) Գրադարան: Կենտրոնի աշխատանքները մինչեւ այժմ հիմնականում ուղղվել են գրադարանի գրքերի քարտագրմանն ու հաշվառմանը, քարտարանների ստեղծմանը: Կենտրոնի մատենագետները ավարտում են գրքերի դասակարգումն ու քարտագրումը: Այժմ քայլեր են ձեռնարկվում գրադարանում ներդնելու գրքերի նկարագրման համակարգչային ծրագիր եւ կապեր հաստատելու աշխարհի համանման այլ գրադարանների հետ: Գրադարանի ապագա ծրագրերի մեջ է մտնում գրադարանային ողջ ֆոնդի թվայնացումը եւ օպտիկական կապի հաստատումը ինտերնետային ցանցում գտնվող աշխարհի կարեւորագույն գրադարանների հետ:

բ) Գիտական կենտրոն: Այս կառույցում քայլեր ձեռնարկվեցին գիտական կենտրոնի գործունեությանը մասնակից դարձնել նաեւ Գեւորգյան ճեմարանի շրջանավարտներին: Ժամանակի ընթացքում կենտրոնը փորձեց իր նպաստը բերել Մայր Աթոռում գիտական հետազոտությունների եւ գիտաժողովների կազմակերպման գործում: Կենտրոնում ընդգրկված աշխատակիցները մի շարք հրապարակումներ են կատարել «Էջմիածին» ամսագրում, նպաստել են Ս. Էջմիածնում «Աստվածաշնչի գրքերի հայ մեկնությունների գրադարանի» լույս տեսած երկու գրքերի հրապա-

բակմանը: Այժմ կենտրոնի առջև խնդիր է դրվել ստեղծել հայ միջնադարյան կանոնական գրականությունը և Հայոց կաթողիկոսական վավերագիր ժառանգությունը հետազոտող գիտական կառույց: Այս նպատակով Կենտրոնը ձեռնամուխ է եղել ԺԹ դարի հայ կանոնագիտական մտքի ամենամեծ տեսաբան Վահան Բաստամյանի գիտական ժառանգության հավաքման և հրապարակման գործին: Կենտրոնի հովանու ներքո աշխատանքներ կատարվեցին՝ հրապարակելու հայագիտական-եկեղեցագիտական այն աշխատությունները, որոնց հեղինակները ՀՀ ԳԱԱ տպագրական գործի սառեցման հետևանքով իրենց մոտ էին պահում ավարտուն երկասիրությունները: Հրատարակության ուղեգիր ստացան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատակից, պ.գ.դ. Վրեժ Վարդանյանի «Հայ առաքելական Եկեղեցին պատմության քաղաքական խաչուղիներում (Դ-Ը դարերում)» և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատակից, ա.գ.դ. Վիգեն Ղազարյանի «Խորանների մեկնություն», Մ. Սթոուն, Տ.Գույումճյան, Հ. Լեհման «Հայկական հնագրության ալբոմ» աշխատությունները ևն:

Կենտրոնն իր նպաստն է բերել նաև Մայր Աթոռում գիտաժողովների կազմակերպման գործին՝ աշխատելով Օշականում գտնվող Մաշտոցյան դպրոցական կազմակերպած Մաշտոցյան ընթերցումների հետ միասին կանոնակարգել մեզանում հայագիտական և եկեղեցագիտական հետազոտությունները: Գարեգին Երկրորդի գահակալության տարիներին հրավիրվեցին մի շարք գիտաժողովներ, որոնք նպատակ ունեին համակարգելու եկեղեցագիտության խնդիրների բնագավառում մեր գիտելիքները: Այդ տեսանկյունից ուշագրավ էին «Քրիստոնեություն և իրավունք» միջազգային խորհրդաժողովը (Էջմիածին, 2000 թ.), Վիեննայի կանոնագիտական կենտրոնի հրավիրած գիտաժողովը (Ծաղկաձոր, 2003 թ. սեպտեմբեր), Ս. Էջմիածնի հիմնադրման 1700-ամյակին նվիրված գիտաժողովը (Էջմիածին, 2003 թ. սեպտեմբեր), Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» երկի գրման 1000-ամյակին նվիրված գիտաժողովը (Էջմիածին, 2003 թ. դեկտեմբեր): «Գարեգին Ա» կենտրոնի և Գուգարաց թեմի նախաձեռնությամբ 2003 թ. հունիսին տեղի ունեցավ «Հովհան Օձնեցին և իր ժամանակը» գիտաժողով, որի նյութերը 2004 թ. սկզբին լույս տեսան առանձին հատորով՝ լրացնելով Կենտրոնի հրատարակությունների շարքը: 2004 թ. «Գարեգին Ա» կենտրոնը Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի հետ համատեղ կազմակերպեց «Հայ մեկնողական գրականության դպրոցները» միջազգային գիտաժողովը, որի նյութերը շուտով լույս կտեսնեն: Ապագայում Կենտրոնը ծրագրում է մենագրությունների և պարբերականի հրատարակություն, գիտական սեմինարների կազմակերպում:

Գիտական կենտրոնը փորձում է իր աշխատանքները համաձայնեցնել ՀՀ ԳԱԱ հումանիտար ինստիտուտների և գրադարանի հետ: Քայլեր են ձեռնարկվում Երևանում ԱՄՆ դեսպանության միջնորդությամբ Կոնգրեսի գրադարանի հետ գրքերի փոխանակություն սկսելու համար: Փոխհարաբերություններ են մշակվում Մաշտոցի անվան Մատենադարանի, ԵՊՀ պատմության և աստվածաբանության ֆակուլտետների ու ՀՀ Ազգային գրադարանի հետ:

«Գարեգին Ա» կենտրոնի աշխատանքներին աջակցում են Գեորգյան ճեմարանի ուսանողությունն ու տնօրինությունը, Մայր Աթոռի վանականությունը:

Հայոց Եկեղեցու թեմերը եւ անհատ անձինք հաճախ գրադարանին գրականություն են նվիրում: Հայտնի է, թե որքան թանկ է հասարակագիտական-միջնադարագիտական գրականությունը: «Գարեգին Ա» կենտրոնը փորձ է անում իրեն տրամադրված սուղ միջոցներով ձեռք բերել Երեւանի գրախանութներում հայտնված, գրադարանի մասնագիտական ուղղությանը հարիր գրքերը:

Կենտրոնի գրադարանը ծառայում է Մայր Աթոռի միաբանների եւ ճեմարանի ուսանողության կարիքներին: Նոր շենքի կառուցումից հետո կենտրոնից կսկսեն օգտվել Հայաստանի Հանրապետության եւ արտասահմանի հայագետներն ու միջնադարագետները:

Կենտրոնն այժմ ունի ավելի քան 250 ընթերցող, որոնց գերակշիռ մասը Գեորգյան ճեմարանի ուսանողներն են: